

Անհապաղ թողարկման համար
20-ը մարտի, 2012թ.

Պատասխանատու՝ Արմինե Պետրոսյան
ՀՌԿԿ-Հայաստանի ծրագրերի ղեկավար
Էլ.-փոստ՝ pmdi@crcc.am, հեռ.՝ 581330

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնները հրապարակեցին Կովկասյան Բարոմետր 2012թ. հարցման հիմնական արդյունքները

Հայաստանի Հանրապետություն, Երևան – Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնները (ՀՌԿԿ) հրապարակեցին ամենամյա ընտրանքային հարցման Կովկասյան Բարոմետր 2012-ի հիմնական արդյունքները: Անցյալ տարվա աշնանը Հարավկովկասյան երկրներում պատահականորեն ընտրված ավելի քան 6000 տնային տնտեսություններում արված հարցումները հարուստ տեղեկություններ են տալիս Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում առկա սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և քաղաքական զարգացումների վերաբերյալ:

Ավելի քան 100 հարց պարունակող հարցաթերթով հավաքված տվյալները բացառիկ հնարավորություն են ընձեռում ոչ միայն հետևելու հանրային կարծիքի և յուրաքանչյուր երկրում կենսամակարդակի փոփոխություններին, այլ նաև վերլուծելու դրանք ըստ սեռի, տարիքի, բնակավայրի տեսակի, և բազմաթիվ այլ փոփոխականների:

2012թ. հավաքագրված տվյալներով բացահայտված որոշ միտումներ կարևոր կիրառություններ կարող են ունենալ ինչպես Հայաստանում, այդպես էլ ամբողջ տարածաշրջանում: Երրորդ տարին անընդմեջ, գործազրկությունն ու աղքատությունը մատնանշվել են որպես հանրությանն առավել հուզող հարցեր Հայաստանում (46% և 21%, համապատասխանաբար) և Վրաստանում (51% և 11%), միջդեռ Ադրբեջանում կարևորագույն խնդիրներ են համարվել նախ չլուծված տարածքային հակամարտությունները և ապա միայն՝ գործազրկությունը (45% և 21%):

Հայաստանում մոտ 70%-ը հավատացած են, որ մարդիկ իրավունք ունեն ազատորեն ասել այն, ինչ մտածում են, մինչդեռ Վրաստանում և Ադրբեջանում այդպես են կարծում համապատասխանաբար 66% և 49%-ը: Դրա հետ մեկտեղ, Հայաստանում 2012թ., հարցվածների շրջանում նկատելիորեն ավելացել է երկիրը ոչ ժողովրդավար համարողների բաժինը (28%, 2011թ. 18%-ի դիմաց):

Չնայած բոլոր երեք երկրների հարցվողների լուրջ մտահոգություններին, երջանկության միջին մակարդակը շարունակում է բավականին բարձր մնալ. միջինում, 1-ից 10-ը սանդղակով, հայերը գնահատեցին իրենց երջանկությունը 6.7, վրացիք՝ 6.8, իսկ ադրբեջանցիները՝ 6.1:

2012 թվականի հարցաշարը հարստացվել է բոլոր երեք երկրներում և Ռուսաստանում տրված՝ Իոսիֆ Ստալինի նկատմամբ հանրային կարծիքը բացահայտող հարցերով: Այդ հարցին, թե “Ո՞ր բառն է լավագույնս նկարագրում Ձեր վերաբերմունքը Ստալինի նկատմամբ”, հարցվողները Հայաստանում տվել են “անտարբերություն” (25%), Վրաստանում՝ “հարգանք” (27%) և Ադրբեջանում՝ “Ես չգիտեմ, թե ով է Ստալինը” (25%) պատասխանները: Չնայած, Հայաստանի (55%) և Վրաստանի (68%) բնակչության մեծամասնությունը կարծում է, որ Ստալինը խելամիտ ղեկավար էր, ով ուժ և բարեկեցություն հաստատեց Սովետական Միությունում, այնուամենայնիվ, բոլոր երեք երկրներում մեծամասնությունը (72%՝ Հայաստանում, 73%՝ Ադրբեջանում, և 63%՝ Վրաստանում) չէր ցանկանա ապրել և աշխատել Ստալինի պես առաջնորդի կողմից ղեկավարվող երկրում:

2012թ. հարցումը նաև պարունակում էր միայն Հայաստանի բնակիչներին վերաբերող՝ Հայոց ցեղասպանությանը և Հայ-թուրքական հարաբերությունների շուրջ հարցեր: Թուրքիայի հետ սահմանը բացելու մասին հարցին հարցվողների կեսը (49%) պատասխանել է, որ դա կնպաստի տնտեսությանը, իսկ 47% կարծում է, որ դա վնաս կհասցնի ազգային անվտանգությանը:

Հարցման արդյունքում հավաքագրված տվյալների շտեմարանները և հարակից փաստաթղթերը ազատորեն հասանելի են www.crcc.am և www.crcccenters.org կայքերում՝ բոլոր նրանց համար, ում հետաքրքրում է խորացված վերլուծությունը:

Այս տարի, ՀՌԿԿ-ն բացառիկ հնարավորություն է ընձեռում մամուլի ներկայացուցիչներին՝ մասնակցելու բոլոր տվյալների շտեմարաններից և ռեսուրսներից օգտվելու դասընթացներին: Լրացուցիչ տեղեկությունների համար կարողեք դիմել Արմինե Պետրոսյանին՝ վերոնշյալ էլ. հասցեով:

ՀՌԿԿ-ն հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է՝ հիմնադրված 2003թ. Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում՝ Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը խթանելու նպատակով: Երևանի Կոմիտասի կոնգրեսային կենտրոնում, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և տեղական համալսարանների համագործակցությամբ (Հայաստանի պարագայում՝ Երևանի պետական համալսարանի) գործող ծրագիրը առաջարկում է հետազոտությունների, դասընթացների և համագործակցության բազմաթիվ հնարավորություններ: Հայաստանում ՀՌԿԿ ծրագրերի մասին տեղեկությունների համար դիմեք:
ՀՌԿԿ-Հայաստան. Երևան 0025, Աբովյան 52, 3-րդ հարկ, հեռ./ֆաքս՝ 58-13-30, 58-14-50, էլ. փոստ՝ crcc@crcc.am, վեբ-կայք՝ www.crcc.am:
Վրաստանում և Ադրբեջանում ՀՌԿԿ գործունեության մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք www.crcccenters.org: